

**Իմամ Խոմեյնիի և Մահաթմա Գանդիի կերպարների համեմատական
վերլուծությունը**

Նախքան Իմամ Խոմեյնիի և Մահաթմա Գանդիի կերպարներին անդրադառնալը համառոտ կներկայացնեմ Իրանում Հնդկաստանում տիրող իրավահիճակը, ինչպես նաև Գանդիի և Իմամ Խոմեյնիի ծավալած գործունեությունները:

20-րդ դարից սկսած, Իրանը ղեկավարում էր Շահի միապետությունը, որը ֆինանսավորվում էր նավթով, և հիմնականում զիջումների էր գնում Մեծ Բրիտանիային, մինչդեռ իրանցիների մեծ մասը ապրում էին աղքատ կյանքով: Շահի ռեժիմը դարձել է ավելի ճնշող, դաժան, կոռուպացված և արտավորված, երկրի ներքաղաքական կյանքում կային բազմաթիվ խնդիրներ՝ գնաճ, տնտեսական բազմաթիվ խոչընդոտներ, ֆունկցիոնալ ձախողումներ: Շահը շատերի կողմից ընկալվում էր որպես արևմտյան ուժը (ԱՄՆ), որի մշակույթը ազդում էր Իրանի վրա: Միևնույն ժամանակ, Շահին աջակցությունից կարող էին զերծ մնալ արևմտյան քաղաքական գործիչները և լրատվամիջոցները հատկապես ԱՄՆ նախագահ Ջիմի Քարթերի ղեկավարության ժամանակ: Երբ Նախագահ Քարթերը հայտարարեց մարդու իրավունքների իր քաղաքականությունը, որտեղ նշում էր, որ մարդու իրավունքների ոտնահարման համար մեղավոր երկրները զրկվում են ամերիկյան զենքից կամ օգնությունից: Ժամանակի ընթացքում իրանցիները հոգնել էին այս իրավիճակից:

Իրանում հանուն իրանցիների բարօրության Սոհամմադ Մոսադեհեմ անունով մի մարդ կատարեց առաջին քայլը: 1979թ-ի Իրանի իսլամական հեղափոխության քաղաքական առաջնորդը դարձավ Իմամ Խոմեյնին, որը տապալեց Սուհամմադ Ռեզա Փահլավին՝ Իրանի վերջին Շահին: Հեղափոխությունից հետո, Ի.Մ. Խոմեյնին դարձավ Իրանի Մեծ Առաջնորդը՝ նոր իսլամական հանրապետության քաղաքական համակարգում՝ և մնաց իշխանության գլխին մինչև իր մահը:

Իմամ Խումեյնին առաջին անգամ քաղաքականապես ակտիվ դարձավ 1962 թ.-ին: Երբ Իրանում Շահի կառավարության կողմից հռչակված Սպիտակ հեղափոխությունը կոչ արեց հողային բարեփոխումներին, անտառների ազգայնացմանը, պետական ձեռնարկությունների մասնավոր շահերին վաճառքին, ընտրական փոփոխություններ շահույթի փոխանակում արդյունաբերության մեջ:

1963 թ. Հունվարին Շահը հայտարարեց վեց կետային բարեփոխումների ծրագիր՝ «Սպիտակ հեղափոխություն» կոչվող ամերիկյան ոգեշնչված միջոցառումների փաթեթ, որը նախատեսված էր իր ռեժիմին լիբերալ և առաջադեմ ճակատ: Իմամ Խումեյնին իր գործընկերների հետ հանդիպումը հրավիրեց, նրանց հետ քննարկելու Շահի ծրագրերին հակադրելու անհրաժեշտության հարցը: Իմամ Խումեյնին հաջողվեց համոզել բոլորներին Շահի կառավարությանը:

Իհամ Խումեյնիի կողմից Շահ Մոհամմադ Ռեզա Փահլավիին հրապարակային «դժբախտ անհեթեթ մարդ» հայտարարումից հետո ձերբակալեցին, և նա մոտ 8 ամիս կալանքի տակ մնաց՝ ազատ արձակվելով 1964 թվականին:

Ռեզա Շահը իրանական միապետությունը վերափոխեց ժամանակակից դիկտատուրա: Իմամ Խումեյնին որոշեց պայքարել դրա դեմ կառուցել մեկ այլ պետություն, որը համեմատելի կլինի կրոնական կանոնների հետ:

1964 թ. նոյեմբերին ամսվա ընթացքում, Ի.Մ. Խումեյնին, այս անգամ էլ Շահին և ԱՄՆ-ին ուղղված հայտարարություններ արեց, ի պատասխան «կապիտուլյացիաներին» և Շահի կողմից Իրանում ամերիկյան զինվորական անձնակազմին տրված դիվանագիտական անձեռնմխելիությանը: Նոյեմբեր 1964 թ., Իման Խումեյնին ձերբակալվեց և աքսորվեց:

Իր աքսորի վերջին մի քանի ամիսների ընթացքում, Իմամ Խումեյնին դարձավ հեղափոխության հոգևոր առաջնորդը:

1979 թ. Հունվարի 16-ին Շահը փախուստի դիմեց, փետրվարի 1-ին, Իմամ Խումեյնին վերադարձավ Իրան: Փետրվարի 11-ին Իմամ Խումեյնի ստեղծեց ժամանակավոր կառավարություն: 1979 թ. մարտի 30-ին և մարտի 31-ին ժամանակավոր կառավարությունը քվեարկություն հայտարարեց՝ Իսլամական հանրապետության

ստեղծման և նոր Սահմանադրության համար: Քվեարկողների 98 տոկոսը կողմ էր միապետությունը իսկամական հանրապետությամբ փոխարինելուն:

Նմանատիպ իրավիճակում էր եղել նաև Հնդկաստանը, դեռևս 1900-ին Հնդկաստանը Բրիտանական կայսրության մաս էր կազմում՝ համարվելով բրիտանական կայսրության գաղութ: Բրիտանացիները մեծ ռազմական ներուժ ունեին Հնդկաստանում: Հնդիկ քաղաքացիները կենտրոնական կառավարությունում և նույնիսկ տեղական կառավարման մակարդակում ոչ մի խոսք չունեին, նրանց ազդեցությունը քաղաքականության մեջ և որոշումների կայացման վրա նվազագույնի էր հասցված: Մինչև 1917 թ. Մեծ Բրիտանիան սկսել էր դիտարկել Հնդկաստանին՝ որպես ինքնակառավարվող երկրի գաղափարը. «Ինքնակառավարման ինստիտուտների աստիճանական զարգացումը՝ Հնդկաստանում պատասխանատու կառավարության ստեղծումը, որը կլինեք Բրիտանական կայսրության անբաժանելի մաս »: Այս կառավարությունը կյանքի կոչվեց էլ 1919թ-ին՝ ղեկավարող մարմինը բաղկացած լինելով 2 պալատներից: Այնուամենայնիվ, բրիտանական կառավարությունը վերահսկում էր բոլոր կենտրոնական մարմինները և տեղական կառավարման շրջանները, բրիտանացիները վերահսկում էին հարկային օրենքները, առանցքային պաշտոնները: Բարեփոխումները ներկայացվել են շատ դանդաղ և դրանց տարածումը նման մեծ երկրում դանդաղ էր ընթանում: Սա շատերին զայրացրեց, քանի որ ընդհանուր համոզմունք ունեին, որ բրիտանացիները կանխամտածված էին այդ բարեփոխումները իրականացնում, Հնդկաստանում իրենց շարունակական գերակայությունը ապահովելու համար:

Հնդկաստանում 1920-ական թվականներից սկսած մեծ ազդեցություն ունեցավ Մոհանդաս Կարամչանդ Գանդին,ով նաև հայտնի է Մահաթմա Գանդի անունով:

Հնդկաստանում, Գանդին համոզեց իր հետևորդներից շատերին օգտագործել ոչ բռնի բողոքներ բիտանական գաղութատիրության դեմ: Նրան դասում են 20-րդ դարի ամենաազդեցիկ մարդկանց շարքին: Գանդին իր գործունեությունը սկսել է աֆրիկյան պետություններում հնդիկ ժողովրդին առաջնորդելով պայքարել հանուն իրենց իրավունքների: Նրանք հրաժարվել են աշխատել, հրաժարվել են վճարել իրենց հարկերը և այլն: Եվ եթե բրիտանացիները բավականին բուռն կերպով արձագանքեին, ապա դա միայն բրիտանական կայսրության համար բացասական ազդեցություն

կունենար և իհարկե հանդիպել են զրպարտիչներ, որոնք բռնի կերպով պարտադրում էին իրենց իշխանությունը: Սակայն կային նաև մարդիկ, ովքեր ցանկանում էին ավելի ծայրահեղ միջոցներ կիրառել: 1915 թ. վերադառնալով Հնդկաստան, նա անցել է ցածր կաստաների կյանքի որակի բարելավմանն ուղղված գործունեություն ծավալել: Գանդին կարճ ժամանակում դարձավ Հնդկաստանի Ազգային Կոնգրեսում անկախությանն աջակցող քաղաքական կուսակցության ղեկավար՝ մեկնեց շրջագայությունների Հնդկաստանի տարբեր շրջաններ իմանալու համար հնդկական համայնքների խնդիրներն: Պատմաբաններն նշում են, որ այդ ճանապարհորդության ժամանակ նրա համբավը աճեց հնդիկների շրջանում: Գուջարաթ նահանգում տիրող ծայրահեղ աղքատության և սովն տեսնելով Գանդին նախաձեռնել էր տարածք մաքրել, նոր դպրոցներ կառուցելու և հիվանդանոցներ կառուցել նախաձեռնություն, որի հետևանքով ձեռքակալվեց, բանտից դուրս գալուն պես նա իր գործունեությունը շարունակեց ավելի մեծ եռանդով: Գանդին իր շարժումը սկսելով 1920-ականների սկզբին՝ կոչ էր անում հնդիկներին բոլկոտել բրիտանական ապրանքներն ու ավանդույթները: Նրա ամենահայտնի բողոքի ակցիաները եղան 1930 թ.-ին, երբ Գանդին հազարավոր հնդիկներ բողոքի ցույցը ղեկավարեց 250 մղոն երթով դեպի ծովափնյա քաղաք՝ բրիտանացիների աղի մենաշնորհի դեմ: Հնդկաստանն ի վերջո ձեռք բերեց լիակատար անկախություն 1947-ին, երբ Գանդին 78 տարեկան էր:

Թե՛ Իման Խոմեյնին, և թե՛ Գանդին հակված էին այն համոզմունքին, որ իրենց երկրները պետք է ձգտեն ինքնավստահության: Նրանք երկուսն էլ արևմտյան մշակույթի որոշ տարրեր բնորոշում էին երիտասարդների մեջ ապակենտրոն և կոռումպացված ազդեցությամբ: Նրանք երկուսն էլ միասնական իշխանության կողմնակիցն էին, պայքարել են հանուն իրենց երկրների և ժողովուրդների ազատության ու բարօրության համար, իրենց հետևից տանելով բնակչությանը: Իրենց քաղաքական հայացքների համար ձեռքակալվել են, սակայն դա էլ չի խոչընդոտել իրականացնելու իրենց ծրագիրը: Նարանց դիտարկում են որպես ազատարար, և իրենց երկրներում առ այսօր մեծ հարգանք են վայելում: